Լեռ Կամսար

Գրավոր պրոպագանդիստներ

Դաշնակցական պրոպագանդիստ Վահան Վրնջունին, որ նոր էր ավարտեր պրոպագանդիստական դպրոցը, քաղաքեն գավառ կաճապարեր կուսակցական օգնություն հասցնելու հայ գյուղացուն:

Սոցիալ դեմոկրատ Գուրգեն Քրքիջյանն ալ գավառեն կդառնար իր քարոզչական միսիան կատարած:

Դեպքն այնպես բերավ, որ թեև հայացքներով տարբեր, բայց միևնույն պանդոկին մեջ պիտի գիշերեին: Պառկելեն առաջ, Քրքիջյանը հանեց ծոցատետրը և կամեցավ ստուգել, թե իր այդ օրվա խոսածները ուղի՞ղ կհամեմատեին ծոցատետրին ցիտատներուն հետ, և թե մոռացմամբ դաշնակցական մտքեր չէ՞ր քարոզած:

Վրնջունին ալ անդին իր ծոցատետրը աչքի կանցուներ՝ վերհիշելու սովորածները ու վաղվան խոսելուն պատրաստվելու համար: Երբ համեմատեցին ու վերահասու եղան մեկը իր խոսածին, մյուսը իր խոսելիքին, ծոցատետրնին ծալեցին ու մոտեցան իրարու՝ չափվելու քիչ մը:

-Ընկե՛ր,-ըսավ Վրնջունին, որը իբրև նորավարտ, ամեն հանդիպողին վրա իր գիտությունը փորձել կուզեր, այնպես ինչպես մեկը դանակը հեսանելե վերջ, ամեն հանդիպած փայտին կքսե սրությունն ստուգելու համար:

-Ընկե՛ր,- կրկնեց Քրքիջյանը:

Մինչև հոս համաձայն էին իրարու:

-Կարծեմ թե դուք ալ սոցիալիստական կուսակցություն եք, այնպե՞ս է, - հարցուց Քրքիշյանը:

-Այո՛, մենք սոցիալիստներ ենք,- պատասխանեց Վրնշունին:

-Եվ եթե չեմ սխալիր, միևնույն ատեն դեմոկրատներ եք մեզ նման:

-Այո՛, մենք դեմոկրատներ ենք, - ըսավ Վրնշունին վախցած՝ թե ինչո՞ւ պիտի այսքան մոտիկ ըլլային իրարու:

-Ահա՜, ուրեմն դուք սոցիալ-դեմոկրատներ եք, -վրա տվավ Քրքիշյանը անակնկալ հաջողածի մը ուրախությամբ ու սղմեց Վրնշունիին զույգ ձեռքերը:

-Բայց լսե՛, մենք սոցիալիստներ ենք, մենք դեմոկրատներ ենք, բայց մենք սոցիալ-դեմոկրատներ չենք, - ձեռներն ազատելով՝ հաղթական գոչեց Վրնշունին ու մեկդի երթալով կամաց մը բացավ ծոցատետրը: Ու տեսնելով, որ շիտակ էր ըսածը, կրկնեց նույնը ավելի ինքնավստահ ու հպարտ:

-Այո՛, այո՛, ինչպես ըսի, մենք սոցիալիստներ ենք, դեմոկրատներ ենք, բայց մենք սոցիալ-դեմոկրատներ չենք:

Քրքիշյանը պարտված, ինքզինքը կժողովեր երկրորդ հարձակման մը համար:

Բայց Վրնշունին հառաջ տարավ հարձակումը:

-Կեցիր բան մըն ալ ես ըսեմ, - շարունակեց Վրնշունին, - չէ՞ որ մենք երկուքս ալ աշխատավորության շահուն համար կտքնինք, ամա, անա՜նկ է, թե ոչ...

-Հարկա՛վ, հարկա՛վ:

-Չէ նե բուրժուվային համար...

-Քա՜վ, քա՜վ լիցի, հրաժարիմք ի բուրժուվայե և համենայն կապիտալե նորա:

Եվ երկուքն ալ կոնակնին դարձուցին արևմուտք, ինչպես կընեն եկեղեցիին մեջ «հրաժարիմքին» ատեն:

-Հա՛, - առաջ տարավ իր խոսքը Վրնջունին, - ուրեմն ի՞նչ տարբերություն մեր և ձեր մեջ... եկուր դաշնակցական եղիր:

Քրքիջյանը զգալով, որ հասեր է փորձության ժամը՝ զգաստ դիրք բռնեց:

-Տարբերությունը խիստ մեծ է, պարո՛ն, - խոսեցավ Քրքիջյանը: Սոցիալ-դեմոկրատիան կիենու արդյունաբերական պրոլետարիատի վրա, իսկ դաշնակցությունը՝ գյուղացիության: Կամաց մը ծոցատետրին նայելով Հետո այս ալ ըսեմ՝ որ դուք կընդգրկեք կոոպերացիաներ ու կդավանիք ֆեդերացիա. մենք՝ կենտրոնացում կամ ավելի ճիշտ՝ ցենտրալիզացիա: Թեև, եթե ասոնք ալ չըլլային, ես արդեն հաստատ աղբյուրե գիտեմ, որ դաշնակցությունը տարբեր կուսակցություն է, սոցիալ-դեմոկրատիան տարբեր:

Վրնջունին կամեցավ պաշտպանվիլ, բայց հակառակորդը շարունակեց:

-...Կեցի՛ր, կեցի՛ր, սա պարզ բան, դուք Կառլ Մաքս, Բեբել, Կաուցկի ունի՞ք:

-Ոչ:

-Ահա՛ քեզի խոշոր տարբերություն մը:

-Է՛, մենք ալ կրնանք մեր շեֆերու անունը Կառլ Մարքս դնել...

-Զանըմ, ի՞նչ ըսել է, հարկավ կրնանք. Մարքս կա՝ Մարքս ալ կա, բոլոր Մարքսերը մե՞կ կըլլան:

Քրքիջյանը հարմար բոպե մը կորոներ, որ ծոցատետրը նայեր, վասնզի այսքանը ըսած էր առանց անգամ մըն իսկ նայելու, ինչ որ անձնապաստանություն ըսել էր:

Մինչև կեսգիշեր անոնք այսպես վիճեցին ու, ի պատիվ իրենց, պետք է ըսեմ, որ սկզբունքին հավատարիմ մնալով՝ միշտ հակառակ խոսեցան իրարու: Վերջեն Քրքիջյանը պառկեցավ: Հարկավ ոչ անոր համար, որ ըսելիք չուներ:

Վրնջունին ճրագը իր մոտ քաշելով խորամուխ եղավ իր ծոցատետրին մեջ, իսկ Քրքիջյանը աչքերը մութին սևեռած քնո հրեշտակին կսպասեր:

Այս միջոցին Վրնջունին հանկարծ աչքը տետրակեն բարձրացնելով պոռաց.

-Հապա, որ պատմության պրոցեսը ցույց չի տար, թե բանվորները հետզհետե ընչազուրկ կդառնան... Ասո՞ր ինչ կըսես:

-Պարո՛ն, քո կողմեն անազնվություն է լույսին մոտ նստել և հարձակվել մութին մեջ պառկողի մը վրա, - ըսավ Քրքիջյանը: -Սակայն ինչ ալ որ ըսելու ըլլաս՝ ես սոցիալ-դեմոկրատ եմ:

-Այդ մեկ, -շարունակեց Վրնջունին, որը ամենևին միտք չուներ խնայելու հակառակորդին, - հետո՝ մեր կոոպերացիաներ 1893 թվին Հոլանդիո մեջ երկու անգամ կրկնապատկվեր են...

-Ինչ կուզես ըսե, ես սոցիալ- դեմոկրատ եմ:

-Իսկ հաջորդ տարին անոնց թիվը եղեր է այնքան, որքան Բելճիո մեջ 1881 և1882 թվերուն միասին վերցված...

-Ես սոցիալ-դեմոկրատ եմ:

-Հերքիր, է՛, ինչո՞ւ կլռես...

-Ես սոցիալ-դեմոկրատ եմ:

-Սո՞ւտ կխոսեմ...

-Ես սոցիալ-դեմոկրատ եմ:

-Ճի՞շտ կխոսեմ...

-Ես սոցիալ-դեմոկրատ եմ՝ և ահա կքնեմ. խնդրեմ քունիս մեջ անազնվություն չընես: Կհայտարարեմ, ես սոցիալ-դեմոկրատ եմ թե քունիս մեջ՝ թե արթուն, - ըսավ Քրքիջյանը ու հաշիվը փակելեն զկնի՝ աչքերն ալ փակեց:

Վրնշունին ալ բոլոր հույսը կտրած՝ մարեց լամպն ու պառկեցավ, բայց աչ կողքին վրա, ինչու որ հակառակորդը ձախ էր պառկեր...

Ահա ճիշտ այս միջոցին, երբ անոնք կմրափեին յուրաքանչյուրը ըստ յուր ծրագրի, ներս մտավ պանդոկապետը, որը դուրսեն ականջ էր դրեր անոնց խոսակցությանը: Անիկա կամաց մը մութին մեջ խարխափեց ու ձեռք անցունելով երկուսին ալ ծոցատետրերը, Վրնշունիին՝ Քրքիջյանի գրպանը դրավ, Քրքիջյանին՝ Վրնշունիին ու մեղմիվ հեռացավ:

***

Առտուն երբ պրոպագանդիստները ելլելով տետրերը վերցուցած սկսեցին իրենց հանապազօրյա աշխատանքը՝ Վրնշունին սկսավ սոցիալ-դեմոկրատական մտքեր քարոզել, իսկ Քրքիջյանը՝ դաշնակցական մտքեր, այնպես՝ ինչպես երեկ սոցիալ- դեմոկրատական:

Անոնց համոզումները փոխս էին ինկեր...

1917թ.